ՊԵՏՐՈՍ ԲՀ. ԵՂԵԳԵՑԻ.— Վանի Յայնկոյսներ եկեղեցիին ձեռագիր Աւետարանը (ԺԳ. Դար) ունի յիշատակարան մը, որմէ կը հասկցուի թէ Պետրոս քհ. եօթն անգամ ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և կ'ստանայ այս Աւետարանը. յիշատակարանն է հետևեալը. «փառք... արդ կազմեցաւ և թերին լցաւ. տառս աստուածային, կտակս արարչին և տեառն Յիսուսի Աստուածորդւոյն. ի թվականութեանս հայոց ՊՀԹ (=1430), զոր ստացեալ էր զսա տէր Պետրոսն Եղեգեցի. ի դռանն արքունի, և ի գերեզման Քրիստոսի, ի վայելումն անձին իւրոյ նահատակի, որ ի հոգսն մաշի վասն Երուսաղէմի. է. անգամ յերթևեկի. նաև եղբօրորդւոյն Ստեփաննոսի, սուտանուն կրօնաւորի: Եւ ի յահէ չարին Շահը ռուհի. որ աւար էառ զաշխարհս հայկազնի. սա պահեստի եղեալ ի վիմի, և բղխեալ վտակ ջրի, և տապալեաց զմշտահոսան աղբիւրն կենդանի: Արդ, որք հանդիպիք սմա, անմեղադիր լերուք սղալանաց և թերութեան որ ի սմա, զի յոյժ աւերեալ էր: Այլ ևս յիշեսջիք ի սուրբ յերկնաթռիչ յաղօթս ձեր զստացաւղ սորին, զտէր Պետրոս և զամենայն արեան մերձաւորս, և զիս զանարժան Ստեփաննոս և զծնողս մեր. և որ յիշէ յիշեալ լիցի և նա յաւուրն աներեկի յաջակողմեան դասին բազմի, ամէն.»: Այս ձեռագիրը ունի նաև ուրիշ յիշատակարան մը զոր կը դնենք հոս. «Կամաւն Ամենակալին Աստուծոյ, ես տէր Պետրոս արհիեպիսկոպոս վերագիտող այսմ նահանգի, իմ կամաւ և իմ յօժարութեամբ՝ զիմ Աւետարանս, որ քերի յերուսաղեմայ, ստացուած հալալ արդեանց իմոց, տվի իմ սանամօրն՝ պարոն Սիթի խաթունին և իւր աստուածատուր զաւակացն. կենաց բարեխօս և քաւիչ յանցանաց, որ, քանի կենդանի է, յամէն տարի, ը. պատարագ տայ առնել մեզ, և երկու ոչխար մատաղ. անխափան. Աստուած չնորհաւոր առնէ պարընայն զսուրբ աւետարանս անջինջ յիշատակ հոգւոց նոցա...» (Լպա. Ցուց. էջ 134—135): Վերջին յիշատակարանը թուական չունի. Պետրոս արքեպս. նոյն տէր Պետրոս Եղեգեցին կը թուի ըլլալ:

ՊՐՈԽՈՐՈՆ ՊԿ. ՍԻԼԻՍՏՐԵՑԻ.— Մբ. աշկ. Երուսաղէմացի Յովհաննէս եպս. (Հաննէ). 1703ին Սեչովի մէջ (Պուղտան) կը կատարէ Զատիկը (ՄՁ. Թ. 1137). 1728ին Նս. Զմիւռնիոյ,